ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 08 » փետրվարի 2022թ. № 20-Ա

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը հաստատելու մասին» Լոռի Բերդ համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 27-ի թիվ 14-Ա որոշումը.

որոշում եմ.

1. Լոռի Բերդ համայնքի բնակչին համայնքի բյուջեից հատկացնել սոցիալական օգնություն համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակչին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ.

2022թ. փետրվարի 08
գ. Լոռի Բերդ

Հավելված.
ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ղեկավարի
2022թ. փետրվարի 08-ի №20-Ա որոշման

# ՑՈՒՑԱԿ

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Վոլոդյա Վանիկի Սաքանյան – 30.000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Ագարակ
2. Գևորգ Տաճատի Պապիկյան - 40000 ՀՀ դրամ, որդու երդման արարողությանը մասնակցելու կապակցությամբ, գյուղ Լոռի Բերդ
3. Վաչիկ Էդիկի Մելիքյան – 40.000 ՀՀ դրամ, որդու երդման արարողությանը մասնակցելու կապակցությամբ, գյուղ Լոռի Բերդ
4. Սիրանուշ Արամի Վերմիշյան – 30.000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Լեջան
5. Անդրանիկ Արամի Գաբրիելյան – 30.000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Ուռուտ
6. Վարթիթեր Սոսի Գևորգյան – 40.000 ՀՀ դրամ, որդու երդման արարողությանը մասնակցելու կապակցությամբ, գյուղ Ագարակ
7. Սասուն Վազգենի Մարգարյան – 40.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Լեջան
8. Հերիքնազ Լիպարիտի Մելիքյան – 40.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Կողես
9. Նարինե Սարիբեկի Ասլանյան - 40.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Յաղդան
10. Ջոհրաբ Վահագի Ասատրյան - 40.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Բովաձոր:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 11 » փետրվարի 2022թ. № 21-Ա

### ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՋԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿՉԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽՆԱՄՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով՝ Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 111-րդ հոդվածով և հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լեջան բնակավայրի բնակչուհի Սյուզաննա Մարտիկի Կատինյանի առողջական անբավարար վիճակը՝ Երևանի բուժհաստատություններից մեկում վերջինիս ստացիոնար բուժման անհրաժեշտությունը և նրա 3 անչափահաս երեխաների առանց ծնողական խնամքի մնալը.

**ո ր ո շ ու մ ե մ.**

**1.** Համիկ Հրաչ Կատինյանի ծնված 17.12.2005թ. (ծննդ.վկ. ԱԲN317097, տրված՝ 19.12.2005թ. Ստեփանավանի ՔԿԱԳ տ/բաժին), Տիգրան Արմեն Կատինյանի ծնված 25.12.2012թ. (ծննդ.վկ. ԱԲN222810, տրված՝ 27.12.2012թ. Ստեփանավանի ՔԿԱԳ տ/բաժին) և Հայկ Անդրանիկ Կատինյանի ծնված 26.05.2015թ. (ծննդ.վկ. ԱԲN398154, տրված՝ 04.06.2015թ. Աջափնյակի և Դավիթաշենի ՔԿԱԳ տ/բաժին) խնամքը կազմակերպել ՀՀ Սյունիքի մարզի Կապանի ճգնաժամային կենտրոնում:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.Տ.

2022թ. փետրվարի 11

գ. Լոռի Բերդ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ու Մ

«11» փետրվարի 2022թ. № 22-Ա

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ԳՅՈՒՂԻ 06-044-0011-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՓՈՂՈՑ, 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 3/1 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՄԱԿԵՐԵՍԸ ՃՇՏԵԼՈՒ, ՃՇՏՎԱԾ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման պահանջները, ՀՀ կառավարության 29.04.2021թ. կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման կարգը հաստատելու մասին թիվ 698-Ն որոշումը և հաշվի առնելով Արմեն Տիգրանի Բեջանյանի (ք. Ստեփանավան Ամերիկական թ.. 1/6 նույնականացման քարտ՝ 000770198 տրվել է 04. 12. 2012թ. 053-ի կողմից:) դիմումը՝ Լոռի Բերդ գյուղի 06-044-0011-0007 կադաստրային ծածկագրի Սայաթ-Նովա փողոց, 4-րդ նրբանցք թիվ 3/1 հասցեյում գտնվող նրան սեփականության իրավունքով՝ պատկանող հողամասի սահմանային չափերը և մակերեսը ճշտելու, ճշտված մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառուցված շինությունները օրինականացնելու խնդրանքը, 11.08.2008թ. N2484016 անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը, «ՎԼԱԴԻՄԻՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը և եզրակացությունը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ շինությունը կառուցված չէ քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի՝

**ո ր ո շ ու մ ե մ**

1. Ճշտել և հաստատել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ գյուղի 06-044-0011-0007 կադաստրային ծածկագրի, Սայաթ Նովա փողոց 4-րդ նրբանցք թիվ 3/1 հասցեում գտնվող Արմեն Տիգրանի Բեջանյանի անվամբ 11.08.2008թ. N2484016 անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի համաձայն պետական գրանցում ստացած հողամասի սահմանային չափերը և մակերեսը, համաձայն՝ «ՎԼԱԴԻՄԻՐ

«...ՔԵԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված, համայնքի ղեկավարի կողմից հաստատված ...ղագրական հատակագծի և ճշտված 0.1366 հա մակերեսով հողամասի նկատմամբ ...ճանաչել Արմեն Տիգրանի Բեջանյանի սեփականության իրավունքը:

2. Օրինականացնել՝ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի գ. Լոռի Բերդ Սայաթ-Նովա փողոց, 4-րդ նրբանցք թիվ 3/1 հասցեի, 06-044-0011-0007 կադաստրային ծածկագրի, Արմեն Տիգրանի Բեջանյանին սեփականության իրավունքով պատկանող 0.1366 հա ճշտված մակերեսով հողամասում ինքնակամ վերակառուցված 14.71 քմ ներքին մակերեսով ամառային խոհանոցը և փոփոխված համարել դրա գործառնական նշանակությունը բնակելի տուն գործառնական նշանակության, ինքնակամ կառուցված 49.65 քմ մակերեսով բնակելի տունը և 6.03 քմ արտաքին մակերեսով օժանդակ շինությունը:

3. Համայնքի բյուջե վճարել՝ 14.71 քմ մակերեսով վերակառուցված և 49.65 քմ մակերեսով ինքնակամ կառուցված, ընդհանուր 64.36 քմ մակերեսով բնակելի տան օրինականացման համար սահմանված 40620.0 (քառասուն հազար վեց հարյուր քսան) ՀՀ դրամ իսկ 6.03 քմ արտաքին մակերեսով օժանդակ շինության համար 2290.0 /երկու հազար երկու հարյուր իննսուն/ ՀՀ դրամ: Ինքնակամ կառուցված բնակելի տան և օժանդակ շինության օրինականացման համար սահմանված ընդհանուր վճարը կազմում է 42910.0 /քառասուներկու հազար ինը հարյուր տաս / ՀՀ դրամ, որը վճարվում է Լոռի Բերդ համայնքի բյուջեի թիվ 900255001324 հաշվեհամարին:

4. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.Տ.

**2022թ. փետրվարի 11**

**գ. Լոռի Բերդ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» փետրվարի 2022թ. № 23-Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ, ԼՈՌԻ ԲԵՐԴ ԳՅՈՒՂԻ 06-044-0011-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՓՈՂՈՑ, 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 3 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՄԱԿԵՐԵՍԸ ՃՇՏԵԼՈՒ, ՃՇՏՎԱԾ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և հաշվի առնելով ՀՀ կառավարության 29.04.2021թ. կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման կարգը հաստատելու մասին թիվ 698-Ն որոշումը, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման պահանջները, ինչպես նաև հիմք ընդունելով Հրանուշ Տիգրանի Բեջանյանի /ք. Երևան Մամիկոնյանց 23 շ. բն. Անձնագիր՝ AT 0444778 տրվել է 30.08.2019թ. 004-ի կողմից/ դիմումը՝ Լոռի Բերդ գյուղի 06-044-0011-0007 կադաստրային ծածկագրի Սայաթ-Նովա փողոց, 4-րդ նրբանցք թիվ 3 հասցեյում գտնվող, նրան սեփականության իրավունքով պատկանող հողամասի սահմանային չափերը և մակերեսը ճշտելու, ճշտված մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառույցված շինությունները օրինականացնելու խնդրանքը, 11.08.2008թ. N2484015 անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը, «ՎԼԱԴԻՄԻՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը և եզրակացությունը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ շինությունը կառուցված չէ քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի՝

**ո ր ո շ ու մ ե մ**

1. Ճշտել Լոռի Բերդ գյուղի 06-044-0011-0007 կադաստրային ծածկագրի տակ գտնվող Հրանուշ Տիգրանի Բեջանյանի անվամբ 11.08.2008թ. N2484015 անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի համաձայն պետական գրանցում ստացած հողամասի սահմանային չափերը և մակերեսը, քանի որ ըստ վերը նշված սեփականության վկայականի հողամասի հատակագիծը բաժնում նշված սահմանային չափերով հողամասի մակերեսի չափը հաշվարկված և գրառված է 0.05 հա որը սխալ է: Ըստ

ակտի հողամասի հատակագծի սահմանային չափերի հողամասի մակերսը կազմում է ,659 հա:

. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ գյուղի 06-044-0011-0007 կադաստրային ծածկագի, Սայաթ Նովա փողոց 4-րդ նրբանցք թիվ 3 հասցեի հողամասի սահմանային չափերը, հողամասի մակերսը հաստատել համաձայն՝ «ՎԼԱԴԻՄԻՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված, համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծի և ճշտված 0.0618 հա մակերեսով հողամասի նկատմամբ ճանաչել Հարանուշ Տիգրանի Բեջանյանի սեփականության իրավունքը:

3. Օրինականացնել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի գ. Լոռի Բերդ Սայաթ-Նովա փողոց, 4-րդ նրբանցք թիվ 3 հասցեի, 06-044-0011-0007 կադաստրային ծածկագրի, Հրանուշ Տիգրանի Բեջանյանին սեփականության իրավունքով պատկանող 0.0618 հա հողամասում՝ ինքնակամ վերակառուցված 21.6 քմ ներքին մակերեսով ամառային խոհանոցը և փոփոխված համարել դրա գործառնական նշանակությունը բնակելի տուն գործառնական նշանակության, ինքնակամ կառուցված 15.02 քմ մակերեսով ծածկը և 44.77 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը:

4. Համայնքի բյուջե վճարել՝ 21.6 քմ մակերեսով վերակառուցված և 59.79 քմ մակերեսով ինքնակամ կառուցված, ընդհանուր 81.39 քմ մակերեսով բնակելի տան օրինականացման համար սահմանված 51.360 (հիսունմեկ հազար երեք հարյուր վաթսուն) ՀՀ դրամ: Ինքնակամ կառուցված բնակելի տան օրինականացման համար սահմանված վճարը վճարվում է Լոռի Բերդ համայնքի բյուջեի թիվ 900255001324 հաշվեհամարին:

5. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ.
2022թ. փետրվարի 11
գ. Լոռի Բերդ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 16 » փետրվարի 2022թ. № 24-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ, 35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետերի և 41-րդ հոդվածի պահանջներով՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2022թ. հիմնական միջոցառումների պլանը՝ համաձայն հավելվածի:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ.

**2022թ. փետրվարի 16**
**գ. Լոռի Բերդ**

Հավելված.
ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ղեկավարի
2022թ. փետրվարի 16-ի թիվ 24-Ա որոշման

# ՊԼԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| ՀՀ ը/կ | Միջոցառումը և թեման | Կատարման ժամկետը | Պատասխա-նատու | Կատարող-ներ | Մասնակիցներ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | I ԱԻՆ ՓԾ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | | | | | |
| | 1. Օպերատիվ տակտիկական պատրաստություն | | | | | |
| | 1.1 Հատուկ տակտիկական ուսումնավարժություն | | | | | |
| 1.1.1 | Մասնակցություն «Կարճ հաղորդագրություններով ՀՀ Լոռու մարզում պաշտոնատար անձանց իրազեկում» թեմայով ՀՏՈՒ-ին | Հունիս, Դեկտեմբեր | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | Լոռու մարզի համապատասխան պաշտոնատար անձինք | |
| | 2. Ընդհանուր պատրաստություն | | | | | |
| 2.1 | Մասնակցություն պետական կառավարման համակարգի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ՔՊ հարցերով պատասխանատուների հետ սեմինար-պարապմունքների անցկացմանը | Յուրաքանչյուր կիսամյակ | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | Լոռու մարզի համապատասխան պաշտոնատար անձինք | |
| | 3. Փրկարարական ուժերի պատրաստության բարձրացման ուղղությամբ | | | | | |
| 3.1 | Մասնակցություն ՀՀ Լոռու մարզի տարածքում հասարակական, կամավորական փրկարարական շարժման ձևավորման ու զարգացման ուղղությամբ աշխատանքների իրականացմանը, հատկապես համայնքներում, սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում արտակարգ իրավիճակներին արագ արձագանքման նպատակով կամավորական հիշեց հենակետերի ստեղծման ուղղությամբ աշխատանքների իրականացմանը | Տարվա ընթացքում | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ՄՓՎ անձնակազմ, **Լոռու մարզի համայնքներ** | |

| ՀՀ ը/կ | Միջոցառումը և թեման | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Կատարողներ | Մասնակիցներ | Նշումներ |
| --- | --- | --- | --- | --- | --- | --- |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| II ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | | | | | | |
| 1. Օպերատիվ տակտիկական պատրաստություն | | | | | | |
| 1.1 Գործնական պարապմունքներ | | | | | | |
| 10.7.1 | Լոռու մարզի համայնքներում ՔՊ թեմաներով գործնական պարապմունքների իրականացում՝ էլեկտրական շչակների գործարկմամբ | Տարվա ընթացքում | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՏԻՄ ղեկավար կազմ, ՄՓՎ ստորաբաժանումներ | Համայնքապետարանի աշխատակազմ, կազմավորումների հրամանատարներ | |
| 2. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ | | | | | | |
| 2.1 | ՀՀ Լոռու մարզի ապաստարանների և հակաճառագայթային թաքստոցների պահպանության վիճակի ուսումնասիրությունների անցկացման ընթացքի վերաբերյալ զեկույցի ներկայացում | 25.06<br>23.12 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | Լոռու ՄՓՎ անձնակազմ, Համապատասխան համայնքներ, կազմակերպություններ | |
| 2.2 | Մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների տարահանման հանձնաժողովների հետ համատեղ տարահանման ուղիների ճշգրտում | Տարվա ընթացքում | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | Լոռու ՄՓՎ անձնակազմ, Տարահանման հանձնաժողով | |
| 3. Փրկարարական ուժերի պատրաստության բարձրացման ուղղությամբ | | | | | | |
| 3.1 | Խոհանոցում էլ. մալուխների կարճ միացումից առաջացած հրդեհ: Ծխապատ գոտուց մարդկանց տարահանում | 16.03 | ՄՓՎ պետ | №40 ՀՓՋ | Բովաձորի հիմնական դպրոց | |
| | Հրդեհաշիջման կազմակերպում տանիքում ծագած հրդեհի դեպքում | 12.05 | | | Ագարակի միջնակարգ դպրոց | |
| | Սպորտդահլիճում հրդեհաշիջման և տարահանման կազմակերպում | 10.11 | | | Լեջանի միջնակարգ դպրոց | |

| ՀՀ ը/կ | Միջոցառումը և թեման | Կատարման ժամկետը | Պատասխա-նատու | Կատարող-ներ | Մասնակիցներ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 4. Պլանների և ծրագրերի մշակում | | | | | | |
| 4.1 | ՀՀ Լոռու մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2023 թվականի հիմնական միջոցառումների պլանի մշակում | Մինչև 23.01.2023 | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | ՄՓՎ անձնակազմ, Լոռու մարզի համապատասխան պաշտոնատար անձինք | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

« 21» փետրվարի 2022թ. № 25 Ա

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՋԱՆ ԳՅՈՒՂԻ 06-038-0042-0006 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387- Ն որոշման պահանջներով՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լեջան գյուղի 06-038-0042-0006 ծածկագրով անշարժ գույքին տրամադրել ՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Լեջան 16-րդ փողոց, թիվ 22 փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ

**2022թ. փետրվարի 21**
**գ. Լոռի Բերդ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 093-21-33-43
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 21 » փետրվարի 2022թ. № 26-Ն

### ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2022թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 8-րդ կետերի՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

**1.** Լոռի Բերդ համայնքի 2022թ. բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1. 01-06-01 դասակարգմամբ «ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» նախահաշվում 4269 հոդվածից 700.000 (յոթ հարյուր հազար) դրամ տեղափոխել 4267 հոդվածին:

**1.2.** 4269 հոդվածում ըստ եռամսյակների սահմանել ծախսերը հետևյալ չափերով.
առաջին եռամսյակ - 0 (զրո) դրամ
երկրորդ եռամսյակ - 500.000 (հինգ հարյուր հազար) դրամ,
երրորդ եռամսյակ - 800.000 (ութ հարյուր հազար) դրամ,
չորրորդ եռամսյակ - 800.000 (ութ հարյուր հազար) դրամ:

**1.3.** 4267 հոդվածում ըստ եռամսյակների սահմանել ծախսերը հետևյալ չափերով.
առաջին եռամսյակ - 4.700.000 (չորս միլիոն յոթ հարյուր հազար) դրամ,
երկրորդ եռամսյակ - 4.700.000 (չորս միլիոն յոթ հարյուր հազար) դրամ,
երրորդ եռամսյակ - 4.700.000 (չորս միլիոն յոթ հարյուր հազար) դրամ,
չորրորդ եռամսյակ - 4.700.000 (չորս միլիոն յոթ հարյուր հազար) դրամ:

**2.** 4264 հոդվածի առաջին եռամսյակի գումարը սահմանել՝ 2.600.000 (երկու միլիոն վեց հարյուր հազար) դրամ:

**3.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

**2022թ. փետրվարի 21**
**գ. Լոռի Բերդ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 03 » փետրվարի 2022թ. № 27-Ա

### ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը հաստատելու մասին» Լոռի Բերդ համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 27-ի թիվ 14-Ա որոշումը.

**որոշում եմ.**

1. Լոռի Բերդ համայնքի բնակչին համայնքի բյուջեից հատկացնել սոցիալական օգնություն համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակչին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ

**2022թ. փետրվարի 03**
**գ. Լոռի Բերդ**

Հավելված.

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ղեկավարի

2022թ. փետրվարի 03-ի №27-Ա որոշման

# Ց Ու Ց Ա Կ

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Ասյա Հովհաննեսի Սուքիա սյան – 30.000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Ուռուտ

2. Մկրտիչ Արթուրի Ղազարյան - 30.000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Ուռուտ

3. Գալուստ Ղարիբի Դավթյան – 40.000 ՀՀ դրամ, որդու երդման արարողությանը մասնակցելու կապակցությամբ, գյուղ Ուռուտ

4. Սուսամբար Ֆերդիկի Ջուլհակյան – 40.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Ուռուտ

5. Վաչիկ Սիրվենի Մուրադյան – 40.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Սվերդլով

6. Անահիտ Վաղարշակի Շահբազյան – 40.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Ագարակ

7. Աբրահամ Յուրիի Պապիկյան – 40.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Լոռի Բերդ

8. Սահակ Ռուբենի Ավետյան – 40.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Լոռի Բերդ։

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ** **Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**